ք. Երևան

20.04.2020թ.

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՈՐՈՇՈՒՄ թիվ 408856/04

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԳԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա.Մնացականյանս, ուսումնասիրելով 20"04"2020 թվականի թիվ _____ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և վարույթի նյութերը, քննելով թիվ 11527 գործը,

ՊԱՐԶԵՑԻ

Ա/Ձ Արմեն Աբրահամյանի (ՀՎՀՀ 27890901) հարկային պարտավորությունները՝ համաձայն անձնական հաշվի քարտի տվյալների՝ 24.01.2020թ-ի դրությամբ կազմել են 361.816 դրամ, որից 356.490 ՀՀ դրամ գումարն առաջացել 2019թ-ի 4-րդ եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկից:

Նշված պարտավորությունը Ա/Ձ Արմեն Աբրահամյանի (ՀՎՀՀ 27890901, հասցե՝ ք.Երևան, Հաղթանակ 10փ. 11) կողմից ՀՀ Հարկային օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում չի վճարվել, որի համար նախատեսվում է պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170^3 հոդվածով:

Վարչական վարույթի շրջանակներում Արմեն Աբրահամյանին հասցեագրվել է ծանուցագիր՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը և գործի քննությանը մասնակցելու վերաբերյալ: Նկատի ունենալով, որ փոստային ծառայությունից ծանուցագրի ստացման փաստը հավաստող ապացույց առկա չէ, ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի կողմից 20"03"2020 թվականին կայացվել է վարչական վարույթը կասեցնելու մասին որոշում՝ համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի:

Կողմին հայտաբերելու ուղղությամբ ձեռնարկվել են համապատասխան միջոցներ: Գործում առկա չէ առարկություն կամ բացատրություն:

Այն փաստը, որ Արմեն Աբրահամյանը վերջին մեկ տարվա ընթացքում կատարել է իրավախախտում, որի համար ենթարկվել է վարչական տույժի (20.09.2019թ-ի թիվ 390683/04 որոշում), սույն գործով դիտվում է, որպես պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 34, 244^2, 281 հոդվածներով և 282 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Արմեն Աբրահամյանի վերաբերյալ հարուցված թիվ _____վարչական վարույթը վերսկսել:
2. Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170^3 հոդվածի՝ Արմեն Աբրահամյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ, նշանակել տուգանք՝ 20.000 (քսան հազար)դրամի չափով:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ծանոթություն. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն՝
Վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչականտ ույժ (հոդված 40)
Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումն հանձնել (հանձնված համարվելու) օրվանից հետո երեսուն օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բացթողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավազոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
Խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում (հոդված 305, մաս 1) գանձապետական հետևյալ հաշվեհամարին.
900005240487՝ տուգանքի վճարման անդորրագրի <<նպատակ>> դաշտում պարտադիր նշելով որոշման համարը:
Տուգանքը նշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանք ընշանակելու մասին որոշումը բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելուց հետո 15 օրվա ընթացքում տուգանքը չվճարելու դեպքում այն ենթակա է բռնագանձման օրենսդրությամբ սահմանված կարգով: